ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

03.07.2023 թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպված նիստին մասնակցում էին գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Գ. Հովհաննիսյանը, Թ. Վարդանյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Թ. Ջանվելյանը, Լ. Մնացականյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական աշխատանքային պլանների քննարկման և հաստատման մասին (2023-2024) (զեկ. Գ. Հովհաննիսյան, Ա. Սարիբեկյան)
2. 2023թ. ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփման մասին (զեկ. Գ. Հովհաննիսյան, Ա. Սարիբեկյան, Գ. Սիրոյան)
3. Իրականացված ուսումնական և արտադրական պրակտիկաների վերբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացման մասին (զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Գ. Հովհաննիսյան)
4. Մասնագիտական ամբիոնների գործունեության վերաբերյալ ամբիոնների վարիչների տարեկան հաշվետվությունների մասին (զեկ. Գ. Հովհաննիսյան, Ա. Սարիբեկյան)
5. ԿԾ պատասխանատուների հաշվետվությունների մասին (զեկ. Թ. Վարդանյան, Ա. Սարիբեկյան)

Բաց քվեարկությամբ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

¬ Հաստատել նիստի օրակարգը:

1.Լսեցին.- Ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական աշխատանքային պլանների քննարկման և հաստատման մասին (2023-2024) (զեկ. Գ. Հովհաննիսյան, Ա. Սարիբեկյան)

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության 2023-2024 ուստարվա աշխատանքային ուսումնական պլանը կազմվել է նախորդ տարիների ուսումնական պլանների հիմքի վրա և ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին:

Ա. Սարբեկյանը հաղորդեց, որ «Ֆինանսներ» մասնագիտության 2023-2024 ուստարվա աշխատանքային ուսումնական պլանը կազմվել է նախորդ տարիների ուսումնական պլանների հիմքի վրա: 2023-2024 աշխատանքային ուսումնական պլանների ժամանակին քննարկման և հաստատման հարցը շատ կարևոր է ամբիոնի աշխատանքների կազմակերպման համար: Այդ բազայի վրա պետք է անմիջապես սկսել ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունների բաշխման աշխատանքները: Նա հաստատեց, որ 2023-2024 աշխատանքային ուսումնական պլանների նախագիծն ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին և պատրաստ է գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.9 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. – Հաստատել ֆակուլտետի «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների 2023-2024 ուստարվա ուսումնական աշխատանքային պլանների նախագծերը:

2. ***Լսեցին.- 2023թ. ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփման մասին (զեկ. Գ. Հովհաննիսյան, Ա. Սարիբեկյան, Գ. Սիրոյան)***

Գ. Հովհաննիսյանի գնահատմամբ՝ ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գոհացուցիչ են, քանի որ յոթ ուսանող ստացել է գերազանց գնահատական: Այս պատկերը արդյունքը է բովանդակային նախապաշտպանությունների, որոնց ընթացքում բացահայտվել են աշխատանքներում առկա թերությունները, շտկվել են բացթողումները: Ավարտական աշխատանքները բնորոշվեցին որպես թիրախային, արդիական և կիրառական: Ուսանողները հավաքել, վերլուծել և համակարգել են ՀՀ մարզերի զբոսաշրջային ռեսուրսների վերաբերյալ հարուստ տեղեկատվություն: Իրենց աշխատանքները իրականացրել են այդ փաստերի վերլուծության հիման վրա, կատարել են եզրահանգումներ ռեսուրսների օգտագործման առկա վիճակի և դրանց օգտագործման հեռանկարային գործընթացների վերաբերյալ: Նշվեց, որ թեև ուսանողները օգտագործել են բավարար չափով գրականություն, սակայն անհրաժեշտ է մեծացնել նորագույն հրատարակությունների տեսակարար կշիռը, ինչը զգալիորեն կբարելավի աշխատանքների որակը:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունը ցույց տվեց, որ ուսանողները լիովին տիրապետում էին իրենց թեմային և կարողանում էին պատշաճ ներկայացնել: Ըստ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի՝ թույլ էին ավարտական աշխատանքներում ձևակերպված գործնական, թիրախային առաջարկները: Առաջարկվեց ներառել նաև միջազգային փորձի հստակ օրինակներ: Առաջարկվեց լավագույն աշխատանքների նյութերի հիման վրա ստեղծել գիտական հոդվածներ: Խոսելով հեռակա բաժնում ավարտական աշխատանքների պաշտպանության մասին՝ նա նկատեց, որ ավարտական աշխատանքներում գերակշռում էր տեսական բաղադրիչը: Առաջարկվեց, տեղային-գործնական ծավալուն հատված ներառել աշխատանքներում և օգտագործել ժամանակակից գրականություն:

Ա. Սարբեկյանի և Գ. Սիրոյանի գնահատմամբ՝ ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գոհացուցիչ են. 7 ուսանող ստացել է գերազանց գնահատական, 8 ուսանող՝ լավ, 2 ուսանող՝ բավարար: Այս պատկերը արդյունք է բովանդակային նախապաշտպանության, որոնց ընթացքում բացահայտվել են աշխատանքներում առկա թերությունները, շտկվել են բացթողումները: Ավարտական աշխատանքների պաշտպանությունը ցույց տվեց, որ ուսանողները լիովին տիրապետում էին իրենց թեմային և կարողանում էին պատշաճ ներկայացնել:

Ըստ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի՝ առկա ուսուսմամբ շրջանավարտները հաճելիորեն զարմացրին ուսումնառության ընթացքում իրենց ձեռք բերած գիտելիքների մակարդակից և լիովին համապատասխանում են ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին: Խոսելով հեռակա բաժնում ավարտական աշխատանքների պաշտպանության մասին՝ Ա. Սարիբեկյանն ու Գ. Սիրոյանը նկատեցին, որ արդյունքներն այնտեղ գոհացնող չէին: Շրջանավարտների ակադեմիական մակարդակը բավարար չէր, նրանց ավարտական աշխատանքներում կային բազմաթիվ բացթողումներ, մինչդեռ հեռակա ուսուցմամբ ուսանողների համար կազմակերպվել էր երկու նախապաշտպանություն:

Ըստ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի՝ ավարտական աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել տվյալների հասանելիությունը: Ուսանողները պետք է շեշտադրեն ինքնուրույնությունը, եզրակացություններն ու առաջարկությունները լինեն հասցեական:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.12 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Ֆակուլտետի մասնագիտությունների 2022-2023 ուստարվա ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման (ավարտական աշխատանքների պաշտպանության) արդյունքները ընդունել ի գիտություն:

3. ***Լսեցին.- Իրականացված ուսումնական և արտադրական պրակտիկաների վերբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացման մասին (զեկ. Ա. Սարիբեկյան, Գ. Հովհաննիսյան)***

Ա. Սարիբեկյանը հաղորդեց, որ 2022-2023 ուստարվա մասնագիտական պրակտիկան կազմակերպվել է «ԵՊՀ ԻՄ ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման» կարգի և «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) III և IV կուրսերի կրթական ծրագրի ուսումնական պլանի համաձայն: Պրակտիկայի նպատակն է խորացնել մասնագիտական գործնական հմտությունները և հնարավորություն տալ համակարգված տնտեսագիտական գիտելիքները և կարողությունները կիրառել գիտական և պրակտիկ մասնագիտական գործունեության մեջ: Վերոնշյալ նպատակն իրագործելու համար, ինչպես ներկայացրեց Ա. Սարիբեկյանը, մշակվել է պրակտիկայի կազմակերպման պլան, որում մանրամասնված է եղել աշխատանքների օրացուցային գրաֆիկը. նախապատրաստական փուլը, հանդիպումների օրերը պրակտիկայի վայրում և մասնաճյուղում, պաշտպանության օրը, ներկայացվող պահանջները, ուսանողների աշխատանքային հարցաշարը:

Պրակտիկայի արդյունքների ամփոփումը կատարվեց ուսանողների հաշվետվությունների պաշտպանությամբ: Պաշտպանությունը իրականացվեց ուսումնասիրությունների և հետազոտության արդյունքների հակիրճ ներկայացմամբ: Ուսանողները պատշաճ կերպով ներկայացրին պրակտիկայի ընթացքում իրենց կատարած աշխատանքները, վերլուծությունները, աշխատանքային առօրյան, ինչպես նաև՝ ավարտական աշխատանքներում օգտագործած նյութերը:

Պրակտիկայի ավարտին տեղի ունեցավ հանդիպում կազմակերպությունների ղեկավարների հետ: Վերջիններս հաստատեցին, որ ուսանողներն ունեն բավարար տեսական գիտելիքներ, որոնց շնորհիվ ձեռք են բերում նաև գործնական հմտություններ:

Ղեկավարներից շատերը շնորհակալական խոսք ուղղելով մասնաճյուղին՝ իրենց գոհունակությունը հայտնեցին ուսանողներից, ինչն արձանագրված է նրանց օրագրերում: Արտաքին շահակիցներին տրվող հարցաթերթերի միջին գնահատականը 5 միավոր է:

Ա. Սարիբեկյանը հավելեց, որ երկկողմանի ներգրավվածությունը, պատրաստակամությունը բարձրացնում են պրակտիկայի արդյունավետությունը և նպաստում մասնաճյուղի հեղինակության աճին:

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ պրակտիկայի նպատակն է ուսանողներին մասնակից դարձնել զբոսաշրջության ոլորտի աշխատանքին, հնարավորություն տալ ինքնուրույն կերպով կազմակերպել առանձին ծառայություններ (հյուրերի ընդունում, գործունեության կազմակերպում, ճանապարհում), ճանաչողական, էկոլոգիական, մշակութային և այլ տեսակի զբոսաշրջության կազմակերպում:

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ ուսանողները նախապես ծանոթացել են պրակտիկայի ծրագրին և ստացել են հանձնարարականներ՝ նախքան համապատասխան կազմակերպություններ այցելելը: Պրակտիկայի պլանը կազմվել է յուրաքանչյուր կազմակերպության առանձնահատկությունների հաշվառմամբ: Ուսանողների հետ հանդիպման ժամանակ ներկայացվել է պրակտիկայի անցկացման կարգը, յուրաքանչյուրին տրվել է օրագիր և պրակտիկայի պլան (ղեկավարի հանձնարարական): Պրակտիկայի ընթացքում ուսանողներն ակտիվորեն մասնակցել են կազմակերպությունների աշխատանքներին, իրականացրել են ուսումնասիրություններ, հավաքել են տեղեկատվություն ավարտական աշխատանքների կատարման համար, մասնակցել են իրականացվող գործարքներին: Երեք ուսանող կազմակերպություններից ստացել է աշխատանքի ընդունման առաջարկ:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.-Իրականացված պրակտիկաների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացումն ընդունել ի գիտություն:

4. ***Լսեցին.- Մասնագիտական ամբիոնների գործունեության վերաբերյալ ամբիոնի վարիչների տարեկան հաշվետվությունների մասին (զեկ. Գ. Հովհաննիսյան, Ա. Սարիբեկյան)***

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ 2022-2023 ուստարում «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի դասաժամերը բաշխվել են ամբիոնի դրույքով աշխատող և ժամավճարային հիմունքներով հրամանագրված աշխատակիցների միջև: Ամբիոնի 17 աշխատակիցներից 3-ը ունեն պրոֆեսորի, 3-ը՝ դոցենտի, 8-ը՝ ասիստենտի, 3-ը՝ դասախոսի կոչումներ:

Ամբիոնի վարիչը հաղորդեց, որ ամբիոնում իրականացվել է ավարտական աշխատանքների բաշխում, ուսանողներին տրամադրվել են գիտական աշխատանքների բովանդակությունը,

գրականության ցանկը, իրականացվել է խորհրդատվություն: Ուշադրության կենտրոնում է պահվել գիտական ղեկավարների հետ ուսանողների հանդիպման գրաֆիկը: Ամբիոնի կողմից իրականացվել են ընթացիկ քննությունների, ընթացիկ ստուգումների և եզրափակիչ քննությունների անցկացման նախապատրաստական աշխատանքներ: Նախապես տրված հարցաշարերից կազմվել են քննական տոմսերը: Վերահսկողությունն իրականցվել է ինչպես ամբիոնի վարիչի, այնպես էլ Կրթական ծրագրերի պատասխանատուի կողմից: Իրականացվել են թեմատիկ պլանների կատարողականի վերաբերյալ ստուգումներ: Իրականացված ստուգումների արդյունքում թեմատիկ պլանները համապատասխանում էին կատարողականին: Ամբիոնի վարիչի կողմից իրականացվել են դասալսումներ, արդյունքների քննարկում. առաջադրված խնդիրներին տրվել են կոնկրետ լուծումներ:

Ա. Սարբեկյանը հաղորդեց, որ ամբիոնում դասաժամերը բաշխվել են դրույքով աշխատող 13 և ժամավճարային հիմունքներով հրամանագրված հինգ դասախոսների միջև: Ամբիոնի 18 աշխատակիցներից 2-ը ունեն պրոֆեսորի, 4-ը՝ դոցենտի, 6-ը՝ ասիստենտի, 6-ը՝ դասախոսի կոչումներ: Ա. Սարիբեկյանը նշեց, որ «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի աշխատանքները կազմակերպվել են համաձայն ամբիոնի հաստատված աշխատանքային պլանի: Ամբիոնի բոլոր դասախոսները աշխատել են հաստատված անհատական ծանրաբեռնվածություններով: Նրանք հիմնականում կատարել են ուսումնական գործընթացի տարբեր օղակների համար սահմանված ծրագրերի պահանջները: Կարդացվել են դասախոսություններ ուսումնական պլանով հաստատված ժամաքանակով, անց են կացվել սեմինար ու գործնական պարապմունքներ, կազմակերպվել են ընթացիկ, ամփոփիչ քննություններ և ստուգումներ: Կատարվել են դասալսումներ, որոնց արդյունքները ընդհանուր առմամբ դրական են: Նկատված թերությունների վերաբերյալ առանձին քննարկումներ են եղել համապատասխան դասախոսների հետ:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Տնտեսագիտության ֆակուլտետի Ընդհանուր տնտեսագիտության և Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների 2022-23 ուստարվա աշխատանքները գնահատել բավարար:

5. Լսեցին.- ԿԾ պատասխանատուների հաշվետվությունների մասին (զեկ. Թ. Վարդանյան, Ա. Սարիբեկյան)

Լսեցին.- Զբոսաշրջություն ԿԾ ղեկավար ա.գ.դ., պրոֆեսոր Թ. Վարդանյանին

Թ. Վարդանյանը հաղորդեց հաշվետու ժամանակաշրջանում իրականացված «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքային պլանով սահմանված գործողությունների հիմնական քայլերը, իրականացման վերջնաժամկետները, վերջնարդյունքները և կատարողականի ցուցիչները:

- Կազմակերպվել է կրթական գործընթացին վերաբերող հարցերի անհատական և խմբային խորհրդատվություն, որի ընթացքում ուսանողներին ներկայացվել է բակալավրի կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը: Ներկայացվել և մեկնաբանվել է կրթական ծրագիրը, որի արդյունքում ուսանողները տեղեկացվել են կրթական ծրագրի նպատակներին, խնդիրներին ու վերջնարդյունքներին:
- Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հետազոտական աշխատանքների պատրաստման կարգին՝ հատկապես այն կուրսերում, որտեղ ուսանողներն առաջին անգամ էին առնչվում հետազոտական աշխատանքի հետ:
- Ստուգվել են մատյանների գրանցումների թեմատիկ համապատասխանությունները կրթական ծրագրի, իսկ վերջինս՝ առարկայական պորտֆոլիոների բովանդակության հետ: Հանգամանորեն ստուգվել են նաև ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերի և առարկայական պորտֆոլիոներին համապատասխանության հարցը:
- Կազմվել և հաստատվել է «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի վերանայման աշխատանքային խումբ՝ համապատասխան աշխատանքային խմբի օրացուցային պլանով:
- Մշակվել են վերանայման խմբի գործողությունները և դրանց ժամկետները: Ծրագրում դասավանդող դասախոսները, ուսանողները և արտաքին շահակիցները ներկայացրել են իրենց առաջարկները կրթական ծրագրի վերաբերյալ: Վերանայվել են կրթական ծրագրի նպատակները, խնդիրները, վերջնարդյունքները:
- Մոնիտորինգային խմբի ձևավորում:

Լսեցին. - Ֆինանսներ ըստ ոլորտի ԿԾ ղեկավար Ա. Սարիբեկյանին:

Ա. Սարիբեկյանը հաղորդեց հաշվետու ժամանակաշրջոնում իրականացված «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքնային պլանով նախատեսված գործողությունների հիմանական քայլերը.

- Կազմակերպվել է կրթական գործընթացին վերաբերող հարցերի անհատական և խմբային խորհրդատվություն, որի ընթացքում ուսանողներին ներկայացվել է բակալավրի կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը:
- Առաջին կուրսեցիների ծանոթացումը կրթական ծրագրին՝ հուզող հարցերի շուրջ քննարկումների կազմակերպում և սպառիչ պատասխանների տրամադրում:
- Դասալսումների գրաֆիկների կազմում և իրականացում:
- Moodle հարթակում դասախոսներին աջակցություն:
- Հետազոտական աշխատանքների պատրաստման կարգի վերահսկում, անհրաժեշտության դեպքում խորհրդատվության տրամադրում:
- «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) ԿԾ վերանայման խմբի ձևավորում, որն իրականացրել է ԿԾ բարելավման գործընթացը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Տնտեսագիտություն ֆակուլտետի «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) և «Զբոսաշրջություն» ԿԾ ղեկավարների հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ ***Ա. Մարգարյան***

Քարտուղար՝ ***Ա. Ալեքսանյան***